

## ՌՌՒՍԱՍՏԱՆԻՑ

Օրինադձերի պաշտօնական չափադրուածքիւնը:— Համաժողովները Ռուսաստանում:— Հացալին լանձնաժողովը:— Պետական բանկի կանոնադրութիւնը:— Մասնակցութիւն Չիկագոյի աշխարհաճանդիսում:— Սիբիրիայի երկաթուղին:— Գինեկեղծութիւնը:— Դումաների նոր ընտրութիւնները:— Ուանողները և խոլերան:— Բժշկական կուրսեր: Թւանշանները դպրոցներում: Գիւղական դպրոց և գիւղատնտեսութիւն:— Չիժովի կտակը:— Հոգևորականների ապահովութիւնը:— Նրկու մահացուցակներ:— Խառն լուրեր:— Նոր գրքեր:

Ռուսաստանը դարձեալ մի չառաջադիմական քաղ արաւ: Մինչև այս տարի մամուլը կամ ժողովուրդը ոչ մի հաստատ տեղեկութիւն չէին ունենում այն խնդիրների մասին, որոնք որոշած են լինում քննութեան ենթարկելու պետական խորհրդի մէջ: Առաջնակի ճանապարհներով հատուկոր լուրեր հասնում էին լրագիրներին, բայց այդ լուրերը մասամբ հիմնովին սխալ էին լինում: Նոյն իսկ ճիշտ տեղեկութիւնների մասին մամուլը վախելով էր կարծիքներ չափնում, թէ մի գուցէ իրան անլարմար դրութեան մէջ գնէր: Ներկայ տարւալ սկզբից «Պետական համբաւներ» լրագիրը սկսել է զետեղել կարճարոտ տեղեկութիւններ պետական խորհրդում քննելիք այն գործերի մասին, որոնց չափնի անելը անլարմար չէ կամ թէ որոնք ունին աչքի ընկնող ընդհանուր նշանակութիւն: Նոյնպէս պիտի հրատարակեն այն գործերը, որոնց հետ մամուլին վաղորօք ծանօթացնելը ցանկալի կլինի:

Այս առիթով ահա թէ ինչ է ասում «Ռուսական միտք» ամսագիրը: «Մենք չենք կասկածում, որ մօտ ապագայում ցանկալի կը դառնալ վաղորօք ծանօթացնել մամուլին ոչ թէ մի քանի, այլ բոլոր դործերի հետ, որոնց մտադրութիւն կալ քննելու օրէնսդրական կարողութիւն: Պետութեան լինալ հրատարակութիւնը մի տեսակ հրաւէր է հասարակութեան նպատակելու օրէնսդրական գործողութեանը մամուլի միջոցով: Մենք հաւատացած ենք, որ ռուսական մամուլի լաւագոյն օրդանները, որպէս պատասխան այդ հրաւէրին, կաշխատեն լրջօրէն և ուշադրութեամբ քննելու իւ-

րաքանչիւր օրինագիծ և աղպիւսով կը կատարեն իրանց պարտքը հալրե-  
նիքի առաջ, Սակայն ամենքին չալտնի է, որ օրէնսդրութիւնը ստանում  
է իւր վերջնական կերպարանքը կառավարչութեան (աղմինխտրացիայի)  
գործունէութեան մէջ»

Վերջին տարիներս Ռուսաստանում օրէց-օր տարածւում է համաժո-  
ղովներ կազմելու գեղեցիկ սովորութիւնը: Համաժողովներ կապացել են և  
և կալանում են գիւղատնտեսական, առևտրական, առողջապահական և  
ալլ զանազան խնդիրների առիթով: Համաժողովների ինիցիատորը շաս-  
անգամ ինքը կառավարութիւնն է հանդիսանում և առհասարակ, որպէս  
փորձը ցոյց է տալիս, նա նշանակութիւն է տալիս ժողովրդի, մասնաւոր  
մարդկանց կարծիքներին, որ արտապալտում են մանաւանդ համաժողով-  
ների միջոցով: Նորերումս ֆինանսների մինիստրը խօսելով վաճառական-  
ների ներկայացուցիչների հետ բորսային շահադիտութիւնը (СПЕКУЛЯЦИЯ)  
սահմանափակելու հարցի մասին, չալտնեց թէ մինիստրութիւնը ինքն էլ  
կարող էր միջոցներ որոնել շահադիտութեան դէմ, բայց ցանկալի է որ  
վաճառականները իրանք մտածեն միջոցների մասին, որովհետև համա-  
նման խնդիրների քննութիւնը մինիստրութեան մէջ կարող է պատահ-  
մամբ վնասել առևտրի շահերին: Այդ առիթով «Ռուսական միտք» ամսա-  
գիրը հետևեալ նկատողութիւնն է անում.

«Սև իսկապէս հասարակական կեանքը ալնքան բարդ է, նա տա-  
րէցտարի դուրս է բերում ալնքան նոր հարցեր, որ ազնիւ և բարեմիտ  
կառավարութիւնը չէ շափազանցնում իւր ուժերը և կատարելապէս  
անհնար է գտնում պատրաստի ծրագիր ներկայացնել հասարակական  
ամեն մի նոր հարցի համար: Կառավարութիւնը կարող է ամենազանկալի  
նպատակներ և բաւականաչափ գիտնական պատրաստութիւն ունենալ:  
բայց նորա սովորական թույլ կողմը մըն է, որ նա բազմիցս չէ զգում ալն  
տպաւորութիւնները, որոնք խառնշոտորում կամ կործանում են մասնաւոր  
մարդկանց ամբողջ տնտեսութիւնը: Մորէլս է գալիս, Հետեւեալն ճանճ  
է չալտնում, անասունների հիւանդութիւնը ամբողջ նահանգներ է աւե-  
րում, ուռաական հացը արտասահմանում գնի չէ գնում, վարկը առևտրի  
փոխանակ շահադիտութեանն է ծառայում, երկաթուղային տարիքը ան-  
կանոն է կազմած, տեղական ինքնավարութիւնը վնասւում է ալն պատ-  
ճառով որ հասարակութեան մի քանի մասերը իրաւունքներից զուրկ են,  
ժողովրդական դպրոցը բազմաթիւ անլարմարութիւնների է հանդիպում  
նորա վերաջ նշանակւած բազմաճիւղ հսկողութեան պատճառով — ալս բո-  
լորը աւելի թույլ ազդեցութիւն է անում մի պաշտօնեակի, քան թէ մլլ  
դասակարգերի վերալ: Պաշտօնեաների ուժերկը ապահովւած է, նոքա չեն

տալիս երեխաներին սկզբնական դպրոցներ և ավելն, Ուրեմն շատ անգամ պաշտօնեան չէ կարող անմիջապէս ըմբռնել այս ու ավել պալմանների անլարմարութիւնը: Բայց սոցա անմիջապէս ըմբռնողութիւնը մեծ նշանակութիւն ունի: Գիւղատնտեսը, գործարանատէրը, բժիշկը, առևտրականը, հասարակ քաղաքացին, գիւղացին կարող են լոյս գցել կենսական խնդիրների վերաջ, ոչ թէ գրքերից վերցրած, ևս ուղղակի զգացած, տեսած, լսած օրինակներով: Ուշադրութեամբ դնենելով շրջապատը մենք կարիք ենք զգում անպիտի ահագին գործունէութեան հալոյնիքի գէթ հանդարտ լառաջադիմութեան համար, որ անհրաժեշտ ենք համարում գործի մէջ տեսնել ոչ միայն ավել քաղաքացիների ուժերը, որոնք ժամանակ առ ժամանակ հրաւիրւում են համաժողովներին, լանձնաժողովներին և խորհուրդներին, ևս առհասարակ ամեն մէկ առողջամիտ և ազնիւ անձնաւորութեան ուժը:

Վերջերս կազմած լանձնաժողովներից մի նշանաւորն էլ հացալին լանձնաժողովն է, որը ուշադրութեան առաւ մանաւանդ հացերի առևտրական դասաւորութեան խնդիրը: Ֆինանսների միջխտրութեան մէջ մշակուել են ծրագիրներ համաման դասաւորութեան համար, Բազմաթիւ հողագործների և հացի առևտրականների համաձայն են դասաւորութեան սկզբունքին, ըստ որում նոքա ցորենը բաժանում են երկու տեսակի ամառալին և ձմեռալին ու լետոյ սպիտակ, կարմիր, նախշուն, վափուկ, պիրք: Յետոյ նոքա ընդունում են որ ցորենի խառնուրդը պիտի երկու տոկոսից աւել չը լինի, հաշուելով այս թւի մէջ կէս տոկոս փոշի, քար և աւազ: Նոյնպէս ցորենը պիտի ծլած չը լինի և վերջապէս բոլորովին անցանկալի է կակուղ և կոշտ ցորենների խառնելը: Առևտրի դեպարտամենտը խորհրդին ներկալացրած զեկուցման մէջ ընդունում է, որ ճաւահանգիստներում հացերի դասաւորութիւն մտցնելը շատ բարերար ազդեցութիւն կունենալ հացի պատրաստելու ձևի վերաջ նորա արդիւնաբերութեան տեղերում և ներքին պահեստի կենտրոններում, կտտիպէ գիւղատնտեսին լաւացնել հացերի կուտուրան, իսկ գնողներին—լարմարացնել հացի բնաւորութիւնը և մաքրութիւնը ան տեսակներից մէկին, որ պահանջում են նաւահանգիստներում: Այնուամենայնիւ արտասահման տանող հացերի համար պարտաւորեցուցիչ դասաւորութիւն նշանակելը դեռ վաղաժամ է համարում, մանաւանդ ցորենի համար հետեւեալ պատճառներով: 1) Դեռ մենք տեղեկութիւն չունենք թէ ինչ դասաւորութեանց է ենթարկւում մեր ցորենը արտասահմանեան շուկաներում: Մենք չգիտենք թէ որքան խառնուրդ և թացութիւն կարելի է թող տալ արտահանող ցորենների տեսակների մէջ, ուստի և չենք կարող ուղիղ եզրակացութեան գալ, թէ

որքան պիտանի է ենթադրեալ դասաւորութիւնը օտար գնողների համար։ 2) Ներկայումս գործադրող պատրաստութեան ձևը նոյնպէս արգելքներ է դնում դասաւորութեան սխառմային։ Գնողը առնելով ցորենը գիւղացիներէրից և մանր երկրագործներէրից, մեծ մասամբ բոլորովին չէ մտածում ապրանքի միատեսակութեան և մաքրութեան մասին. նա հաւաքում է միասին զանազան ձևի, գոյնի, կշռի հատիկները և շատ անգամ էլ խառնում է ցորենի հետ ուրիշ հացահատիկներ և փոշի։ Այդպիսի ցորենը անհնար է նաւահանգիստներում որ և է տեսակին չատկացնել։ Անհնար է նոյնպէս մանր պարտեաներից միատեսակ բեռը պատրաստել շոգենաւի համար, մանաւանդ ալն նաւահանգիստներում, որտեղ ցորենը բերում է երկաթուղիով, ջրով և սալներով ինչպէս օրինակ Օդեսաստում և Բոստոնում։ Այս նաւահանգիստներում ցորենի դասաւորութիւնը հնարաւոր է միայն ալն պարտեաների համար, որոնց բերողները խոշոր երկրագործներն են, կամ թէ որոնք պատրաստած են անմիջապէս արտահանողներին ձեռքով, որովհետև սոցա համար «բարի անուներ» զին ունի։

Ուրեմն մինչև որ երկրի մէջ կը տարածեն տեղեկութիւններ ալն մասին, թէ ինչպիսի դասաւորութիւն է պահանջուում արտահանող հացահատիկներէրից, ցանկալի է զբաղել ծրագրի մշակելով, մանաւանդ ցորենի համար, մասնակցութեամբ օտար շուկաների նշանաւոր գնողներին։ Միւս կողմից պէտք է աշխատել մտցնել Ռուսաստանում ալնպիսի միջոցներ (жароприятия), որոնք կազդեն անմիջապէս ռուսական հացահատիկներին բարելաւութեան վերայ և կը կանոնաւորեն հացի առևտուրը երկրի մէջ։

Ոչ պակաս ուշադրութեան արժանի է և ալն չանձնատողովը, որ ընտրւած է պետական բանկի կանոնադրութեան բարեփոխելու հարցի համար։ Այդ չանձնատողովը արդէն իւր կարծիքը չպտնել է, որի հետ կարճ կերպով կը ծանօթացնենք ընթերցողին։ Քննուած են հինգ խնդիրներ վերաբերեալ բանկի գործառնութեան, միջոցներին, զաւտական ճիւղերին, վարչական կազմակերպութեան և բանկի շարքերութեանը պետական գանձարանի հետ։

Յանձնատողովի կարծիքով անհրաժեշտ է զարգացնել արդիւնագործական վարկը, ինչպէս երկրագործութեան նոյնպէս և գործարանական արդիւնաբերութեան համար։ Զեղջի (ուչոտ) ներկայացրած պարտամուրհակների գնահատութեան համար պէտք է ուշադրութեան առնել ալն նպատակը, որի համար փոխատուութիւնը (ССУЖБ) պահանջուում է։ Վերաբերեալ մուրհակների ժամանակամիջոցներին՝ անդամներից ոմանց կարծիքով հարկաւոր է ընդունել աւելի երկար ժամանակամիջոցներ, որովհետև Ռուսաստանում շատ անգամ տեղերի հեռաւորութեան և համանման հանգամանքների պատճա-

ուով առևտրական շրջան սուբյեկտները (օրբորտները) ձգձգում են: Բայց անդամների միւս մասը բաւարար է դառնում ներկայումս ընդունւած վեցամսեայ ժամանակամիջոցը:

Առանձին ուշադրութեան արժանացաւ մանր վարկի խնդիրը: Կարծիք չալտնեց մինչև անդամ, թէ բանկը պիտի զիջողական տոկոսներ նշանակէ մանր վարկերի համար:

Արդիւնագործական վարկը լանձնաժողովի կարծիքով պիտի լինի երեք տեսակի: Առաջինը՝ հիմնարկութիւնների դրութիւնը բարելաւելու կամ նոր հիմնարկութիւններ կառուցանելու համար: Երկրորդը՝ հիմնարկութիւնները կենդանի և մեռած ինվենտարով ապահովելու համար: Երրորդը՝ նոցա շրջանառու միջոցները և էկսպլոատացիայի ծախսերը ծածկելու համար:

Ինչնհետո և շրջանառու կապիտալ ձեռք բերելու վարկը լանձնաժողովի կարծիքով պիտի նպատակ ունենայ նոր արժէքներ (ԱՅԵՌ-ՅՕՍՏԻ) ստեղծելը: Ուստի իւրաքանչիւր անգամ պէտք է որոշել, թէ որքան արդիւնաւէտ կը լինի մտադրւած ծախսը և ապա հսկել, որ նպատարը գործադրելի որոշած նպատակի համար: Բայց որովհետև ալզ հսկողութիւնը հեշտ չէ, ուստի որպէս զի բանկի գործակալները կարողանան ի մտտը ծանաթանալ պարտապահներին և նոցա գործերի ապահովութեան աստիճանի հետ, օգտակար է համարուում քարշել դէպի ալզ գործը ուրիշ պաշտոնական անձեր, օրինակ հարկահան տեսուչներ, որոնք մօտիկից ծանօթ լինելով տեղական անտեսական պալմաններին հետ, կարող կը լինէին նպատակ վարկի ուղիղ ընթացքին: Բացի ալզ ենթադրւած է փոխ տալ միջնորդների ձեռքով, որպիսիք կարող են լինել օրինակ զեմստեակին հիմնարկութիւնները, զանազան փոխադարձ վարկի ընկերութիւններ, մասնաւոր վարկալին հիմնարկութիւններ, իսկ գիւղացիների համար աչքի ընկնող տեղական երկրագործները: Ձեռ կողմից գիւղատնտեսական վարկը պիտի նմանէ սուօ-մուլտակի վարկին, որը թուլատրւած է պետական բանկին 1884 թվին, ըստ որում բանկը իրաւունք կունենայ նպատար ապահովացնել ոչ միայն նորա արդիւնաբերական նշանակութեամբ, ալ և մասնաւոր իրական դրաւականներով կամ թէ վտտահելի անձնաւորութեանց երաշխաւորութեամբ: Ինչնհետո ձեռք բերելու նպատար պիտի հատուցանուի պարբերական վճարներով, իսկ շրջանառու միջոցների վարկը կունենայ մշտակալ բնաւորութիւն և բանկը իրաւունք կունենայ նպատակ ապարդիւն գործադրութեան դէպքում պահանջել պարտամուրհակի հատուցումը: Յանձնաժողովի միւս անդամները ընդդէմ են արդիւնաբերական փոխատուութիւնները անշարժ կալածներով ապահովացնելու մտքին և զերպասում են ապահովութիւնը այն առարկաներով, որոնց համար փոխատուութիւնները նշանակուում են, օրինակ

ինչևնտար ձեռք բերելու համար հէնց գործիքներ տալ և այլն: Իսկ բանկը ապահովացնելու համար առաջարկում է խիստ պատասխանատուութիւն նշանակել ինչնտարը ծախելու դէմ փոխառութիւնը վերադարձնելուց առաջ և ըստ կարելոյն փողերը վճարել ոչ թէ պարտապանին, այլ ուղղակի գնելիք առարկաների ծախողին:

Ինչպէնտար ձեռք բերելու նպատի ժամանակը ենթադրած է նշանակել 6 տարի, իսկ շրջանառու կապիտալի համար մինչև 12 ամիս, թէև ոմանց կարծիքով այդ շատ է. փոխատուութեան քանակութիւնը պիտի լինի ոչ աւել քան շրջանառու կապիտալի կամ ձեռք բերելիք առարկաների գումարի 75 տոկոսը:

Նոյն սկզբունքների վերաջ պիտի հիմնւած լինի և գործարանական վարկը միայն աչն զանազանութեամբ, որ վարկի գումարը պիտի չանցնէ շրջանառու կապիտալի և ձեռք բերելիք առարկաների գումարի 50 տոկոսից, որովհետև գործարանական հիմնարկութեան աղիւնքի աստիճանը աւելի դժւար է որոշել:

Յանձնաժողովը ուշադրութիւն է դարձրել նոյնպէս մանր արդիւնագործական վարկի կազմակերպութեան հարցին և ցանկութիւն է չալտանել քանի մի առանձին ձեեր որոշել աչն նպատակի համար:

Այդ բոլորը ցոյց է տալիս, որ ֆինանսական ներկայ մինիստրը մեծ ուշադրութիւն է դարձնում Ռուսաստանի տնտեսական դրութիւնը վերականգնելու վերաջ և սորան ապացոյցներից մէկն էլ հետևեալն է: Նոյն մինիստրը որոշել է ուշարկել Զիկագոյի աշխարհահանդէսը առանձին պատւիրակներ, որոնք պիտի ուսումնասիրեն Միացեալ Նահանգների տնտեսական, արդիւնագործական և ֆինանսական գործունէութիւնը: Տնտեսական հետազոտութիւնները դրւած են պրոֆեսսոր Նանժուլի վերաջ, քիմիական տեխնոլոգիայի համար նշանակւած է պրոֆ. Կոնովալով և մեխանիկական տեխնոլոգիայի համար—պրոֆ. Բորիլով: Սոքա ոչ միայն պիտի հետազոտեն աշխարհահանդիսի համապատասխան բաժինները, այլ և պիտի մանրամասն ծանօթանան Միացեալ Նահանգների աչքի ընկնող հիմնարկութիւնների հետ և նոյնպէս պիտի ժողովն գիտնական և վիճակագրական Նիւթեր:

Հետազոտութեանց ծրագրերնեց աւելի նշանաւորն է տնտեսական խնդիրների ծրագրերը, որը կազմել է պրոֆ. Նանժուլ առևտրի ու մանուֆակտուրայի ղեպարտամենտի դիրեկտորի համաձայնութեամբ: Մրադրի մէջ մտցրած է սինդիկատների, գործադուլների և միութիւնների հետազոտութիւնը, որոնք սաստիկ տարածւած են Ամերիկայում և սկսած են մուտ դործել նոյնպէս Ռուսաստան: Նոյն պրոֆեսսորը պիտի ուսումնասիրէ

հացի ատևորին վերաբերեալ պայմանները, օրինակ հացահատիկների դասաւորութիւնը, էլեւատորների գործածութիւնը և այլն. բացի այդ նա պիտի ծանօթանալ տեխնիկական կրթութեան դրութեան, Նաւահանդիստների հիմնարկութեան և համանման բաների հետ:

Վերոյիշեալ խնդիրների մասին պրոֆեսսորները պարտաւոր են տեղեկութիւն տալ Ամերիկայից վերադառնալուց լետու, իսկ մի քանի ամելի կարեւոր խնդիրների մասին պիտի հաշիւ ներկայացնեն հէնց որ նիւթերը ձեռքի տակ կոշենան:

Ոչ պակաս ուրախալի տպաւորութիւն են անում «Ֆինանսական համբաւարի» մի շարք յօդածները Սիբիրիայի կառուցող երկաթուղու նշանակութեան մասին: Հաշուելով լիշեալ երկաթուղու երկարութիւնը 7,100 վերտո և ենթադրելով որ նոր գաղթողները կը բնակեն գծի երկու կողմից 100 վերտո տարածութեան վրայ, կը ստանանք մի նեղ բաց երկար տարածութիւն 1,420,000 քառակուսի վերտո մեծութեամբ, որը աւելի է, քան թէ Գերմանեան, Աւստրո-Ունգարիան, Ղուանդիսան, Բելգիան և Գանիան միասին վերցրած: Ամբողջ տարածութիւնը թէ կլիմայի և թէ ալ պայմանների տեսակէտից մեծ մասամբ լարմար է հողագործութեան և սորան կից արհեստների համար: Լրագրի կարծիքով այդ տարածութիւնը կը կենտրոնացնէ իւր մէջ բոլոր գաղթականներին:

Այդ բոլորը ուրախալի է: Բայց նշմարում են Ռուսաստանում և տխրալի երևոյթներ: Որպէս օրինակ բերենք այն նկատողութիւնը, որ անում է «Գինեգործական ամսագիրը» Մոսկուայի գինեկեղծութեան արհեստի մասին: Անհերքելի հաշիւները ցոյց են տալիս, որ զանազան տեղերից Մոսկուա ներմուծւում է տարեկան 510,600 փութ գինի, իսկ արտահանւում է 676,900 փութ: Ուրեմն ներմուծւած գինուց քաղաքի միլիոնաւոր բնակիչները խմելուց լետու ոչ միայն չէ պակասում ալլ դեռ 166,300 փութ էլ աւելանում է: Մոսկուայի քաղաքային կալարանում արւած փորձերից երևաց, որ գինու քանակութիւնը աճում է կեղծելու միջոցով, որը երևում է հետեւալից ֆորմերից երևաց, որ ինչը տեսակ սպիտակ գինիներից անխառն էին միայն երկուսը, իսկ տասնուամէկ տեսակ կարմիր գինիներից միայն մէկը բաւարար գտնւեց, իսկ մի քանիսի մէջ գինու նշուլն էր չկար: Ուրեմն իրաւամբ է նկատում «Գինեգործական ամսագիրը», թէ զուտ գինին այժմ այնքան հազաւգիւտ է, որքան զուտ աղամանը: Նոյն ամսագիրը հետեւալ նկատողութիւններն է անում: 1885 թւին բարձրացնելով արտասահմանից

բերող գինիների ակցիզը, պրոտեկցիոնիստները չուս ունէին, թէ խաղողի արդիւնաբերութիւնը Ռուսաստանում կը բարձրանայ, գինեգործութիւնը կը լաւանայ և ռուսական գինու արտահանութեան ասպարէզը կը լաւանայ, Բայց իսկապէս այդ սխտեմից օգտեցին միայն կեղծող—գինեվաճառները, որոնք էժան գնում են արդիւնաբերողներից զուտ գինին և կեղծելուց լետոյ վաճառում են գործադրողի վերայ եռապատիկ գնով: Բացի այդ, կեղծողները տգիտաբար խառնում են գինու մէջ ֆլասակար և նոյն իսկ թունաւոր նիւթեր, ի վերջոյ ամազիրը կարծիք է չալանում, թէ օրէնսդրութիւնը անպատճառ պիտի դիմէ վճռական միջոցների չի՛նալ չարիքի դէմ, որը արդէն չափը անցել է:

Ուրախալի չեն նոյնպէս այն հետեանքները որ ունեցել են նոր կանոնադրութեան հիման վերայ կատարած քաղաքալին ընտրութիւնները մի քանի քաղաքներում: Առհասարակ շատ քաղաքներում նկատուում է մի տեսակ սառնութիւն թէ ընտրողների և թէ ընտրողների մէջ: Շատ տեղերում ընտրողները խմբերով հրաժարուում են, աջնպէս որ անհնար է դառնում ձայնաւորների հարկաւոր թիւը լրացնել:

Թէ ովքեր են ընտրւածները, այդ մասին նոյնպէս չէ կարելի մխիթարիչ տեղեկութիւններ հաղորդել: Յայտնի է որ նոր կանոնադրութեան հիմքը կազմում է որոշ տնտեսական ցինդ ունեւալը, որից շատ անգամ զուրկ են լինում զանազան ինտէլիգենտներ, մտաւոր ասպարէզների գործիչներ և այլն: Ուստի ձայնաւորների թիւի մէջ մտնում են ոչ այնքան զարգացած անձնաւորութիւններ, որպէս լինում էր առաջ: Վերցնենք որպէս օրինակ Սարկովի ընտրութիւնները, որ արդէն վերջացած են: Այդ քաղաքում առաջ ձայնաւորները կէսից աւելի ինտէլիգենտներ էին, օրինակ պրոֆիսսորներ, ըժիշկներ, ինժինեռներ և այլն: Իսկ այժմեան դումայի մեծամասնութիւնը կազմում են վաճառականներ, արհեստաւորներ, սակաւ գրագէտ նոյն իսկ անգրագէտ տանտերեր, որոնց պարագլուխն է չալոնի բանկալին կուսակցութիւնը: Նախկին դումայում քաղաքալին զանազան չանձնաժողովներում մասնակցում էին համալսարանի ընկտորը, որպէս մասնագէտ հարկալին գիտութեան մէջ, պրոֆեսսոր Չիխանովիցկի՝ որպէս ֆինանսական չանձնաժողովի նախագահ, պրոֆ. Լազերմարկ, որ հետազոտում էր ջրանցքի խնդիրը, պրոֆ. Տուրչինով, որ աշխատում էր սանիտարական հարցերի մէջ, պրոֆ. Մորոզով, որ գործում էր քաղաքալին ստատիստիկալի մէջ, պրոֆ. Օստապինկո-շուկաների և առևտրական պահեստների կազմակերպութեան հարցում, պրոֆ. Շիմկով—ժողովրդական լուսաւորութեան գործում և նոյնպէս բազմաթիւ բարձրագոյն կրթութիւն ունեցողներ: Այժմ այդ ամբողջ խումբը մի կողմն է

թողած, իսկ դուման ընկել է բանկալին կուսակցութեան ձեռքը: «Զարմանալի չէ—հարցնում է խարկովարնակ թղթակիցներին մէկը—որ երեք բարձրագույն դպրոցներ, գիմնազիստներ, մուզէներ, գրադարաններ և ուրիշ շատ լուսատուրիչ հիմնարկութիւններ ունեցող քաղաքի անտեսութիւնը լանձնած պիտի լինի աշխարհի մարդկանց կամքին, որոնք հազու կարողանում են իրանց ազգանունը գրել»:

Ընթերցողին շատ չը տխրացնելու համար կաշխատեմ աւփմ էլ քանի մի ուրախալի տեղեկութիւններ հաղորդել: Յալտնի է որ վերջին խոլերալի ժամանակ բժշկութեան ուսանողները նշանաւոր օգնութիւն հասցրին ժողովրդին: Արձակուրդի պատճառով ուսանողները ցրած լինելով պետութեան բոլոր մասերում, ոչ մի տեղ պարապ չը մնացին, չը խնայեցին իրանց մատաղ ուժերը և չը վախենալով անխնայ հիւանդութեան ճանդն ընկնելուց, քաջութեամբ նոյն լակ կատարեալ անձնագոհութեամբ ասպարէշ մտան և ամենաչնչին վարձատրութեամբ, շատերն էլ առանց վարձատրութեան կուեցին համաճարակի դէմ: Որպէս ապացոյց կը բերենք ալն խօսքերի մի մասը, որ ասաց լուսատուրութեան մինխտրը Մոսկալի կլինիկալում ուսանողները գլմաց: «Սգաում եմ ներկալ դէպքից—ասաց դրաֆ Կելիանով—որ լալտնեմ ձեզ, թէ ալս ամառալ և աշնան ընթացքում ես լսել եմ ամեն կողմից ամենագովասանական խօսքեր բժիշկ—ուսանողների գործունէութեան մասին խոլերալի դէմ: Ֆինանսների մինխտրը, որ ճանապարհորդեց շատ նահանգներում, լալտնեց ինձ, որ ինչպէս ամեն տեղ խոստովանում են, ուսանողները վերաբերել են դէպի իրանց պարտաւորութիւնները անսովոր անձնուրացութեամբ: Նահանգապետները ներկալացրած զեկուցումների մէջ նոլնպէս ուսանողների գործունէութիւնը բնորոշած է գովելի կերպով: Ինձ հաղորդել են ականատանները, թէ ձեր ընկերները ոչ միալն լոկ հսկում էին հիւանդներին, ալ և եղբարբար վերաբերելով ինքեանք տրորում էին նոցա, կերակրում և խմեցնում էին նոցա իրանց ձեռքով: Բալց ինչոր առանձնաւ, նշանաւոր է դարձնում ուսանողների գործունէութիւնը, սա նոցա լատկանիշ շամեստութիւնն է: մարդասէր երիտասարդները չէին հպարտանում, չէին մեծամտում իրանց գործերով, ալնպէս որ բացի մերձաւորներից գուցէ ոչոք չէր իմանում, թէ ինչ է գործում ալս ու ալն ուսանողը: Ճշմարիտ է նկատել ոմն, թէ բժշկութիւնը հիմնած է քրիտոնէական բարեգործութեան վերալս»:

Աղալիսի պալժառ գոլներով է նկարաղբում ուսանողների գործունէութիւնը: Յիշեալ արդարացի նկատողութիւններին մենք կաւելացենք և ալն, որ անձնէր ուսանողութեան մէջ եղել են զանազան ազգերին և

դաւանութիւններին պատկանող երիտասարդներ: Ուրեմն զարձեւալ մի շօշափելի ապացոյց արն ձշմարտութեան, թէ գիտութեան դաստիարակչական ազդեցութիւնը մեծ է անհատի վերալ ինչ ազգին և դաւանութեան էլ սլատկանէ նա:

Փանի որ խօսքներս համալսարանական ասպարիզին եկա՝ կը բերենք և մի հետաքրքիր լուր: Ինչպէս լրագիրները չալտնեցին մտադրութիւն կալ՝ մի քանի համալսարաններում հիմնելու առանձին գործնական կուրսեր, որոնց տեսողութիւնը կը լինի երեք տարի, գործնական բժիշկներ պատրաստելու համար: Ընդունելու են և միջնակարգ կրթութիւն չունեցող երիտասարդներ, որոնք կը կարողանան քննութիւն բռնել որոշեալ ծրագրի համեմատ: Կուրսերը ձրի կը լինեն, միայն թէ աւարտողները պարտաւորոււմ են որոշ ժամանակամիջոցում պաշտօն վարել այնտեղ, որտեղ կը նշանակուին բժշկական դէպարտամէնտի կողմից: «Ռուսական համբաներ» լրագիրը կարծում է, թէ այդ կուրսերից ոչինչ օգուտ չի կարելի սպասել: որովհետեւ երեք տարուալ մէջ չի կարելի պատրաստել անպիսի բժիշկներ, որոնց կարելի լինի հիւանդներ չանձնել: Տնաս և կիսապատրաստ բժիշկները աւելի չարիք կը չառաջացնեն, քան բարիք: Բայց Ռուսաստանում բժշկական գործին ըստ կարելոյն զարկ տալու համար թերթը առաջարկում է հետեւեալ միջոցները. 1) հիմնել մի քանի բժշկական նոր ֆակուլտետներ, ինչպէս օրինակ հարկատր է Օդեսսայի համալսարանին, 2) հիմնել վաղուց մտադրուած կանանց բժշկական ինստիտուտը, 3) բարձրացնել ֆէլդշերական դպրոցների գրութիւնը և ալլալխով չառաջ բերել լաւ պատրաստուած բժիշկներ և բժշկական օգնականներ և 4) իրաւունք տալ արտասահմանում աւարտած կին-բժիշկներին իրանց սովորածը Ռուսաստանում գործադրելու:

Մենք կաւելացնենք և հինգերորդ, որ եթէ արտասահմանում աւարտող ուսանալատակ երիտասարդներին տրէր անպիսի իրաւունքներ, որպէս ստանում են Ռուսաստանում աւարտողները, շատերը ուսանալատակներից բժշկութիւն կուսումնասիրէին արտասահմանեան համալսարաններում և վերադառնալով հարեհիք շատ օգտակար գործունէութիւն կ'ունենալին:

Տեսնենք այժմ թէ ինչ նորութիւններ կան միջնակարգ դպրոցների աշխարհում: Ռուսաստանի բոլոր միջնակարգ և սկզբնական դպրոցներում ընդունուած է պատասխանած դասը թւանշաններով գնահատելու եղանակը: Թւանշանի նպատակն է ցոյց տալ, թէ աշակերտը որքան ընդունակ կամ աշխատասէր է դասերի մէջ: սակայն, որպէս նկատել է ուսումնարանական բարձրագոյն վարչութիւնը, շատ ուսուցիչներ չարաչար են գործա-

ծում թւանշանը: Նորերումս միջնակարգ դպրոցներին շրջագիր է ուղարկւած, որի մէջ մատնացոյց է արած վիշեալ թերութեան վերալ: Նկատուած է, որ շատ ուսուցիչներ երբեմն ամբողջ դասարանին վատ թւանշան են նշանակում, կարծելով թէ՛ մեծ քաջագործութիւն են անում: Սթէ՛ դասատան մեծ մասը որոշ առարկայից վատ թւանշան է՞տտանում, ալդ չէ՛ նշանակում, թէ՛ այխարճի բոլոր ծաւրերից ծուլերը և անընդունակները ժողովել են մի դասատնում: Այլ ալդպիսի դէպքը զլիաւորապէս ապացուցանում է, թէ՛ ինքը ուսուցիչը անընդունակ կամ թուլ է պաշտօնի մէջ: Ուստի աւելի լաւ չէր լինիլ, որ փոխանակ ամբողջ դասատնուը սեպանելու, ուսուցիչը աւելի ուշադրութիւն դարձնէր իւր պարագամաց եղանակի վերալ: Շրջագիրը համողած է, որ ալդպէս վարելով ուսուցիչը ստիպւած չի լինիլ շատերին վատ թւեր նշանակելու:

Կատարելապէս համակրելի են վերուվիշեալ նկատողութիւնները, բայց մինք աւելի հեռու դնալով կը նկատենք, որ ոչ միայն թւանշանի չար գործածութիւնը հարկաւոր չէ, այլ որ առհասարակ թւանշանի գործածութիւնը առանձին անհրաժեշտութիւն չէ: Թւանշանը ուրիշ մի բան չէ բայց եթէ միջնադարեան ծեծի և ֆալախակալի մնացորդը: Ինչ դեր մի ժամանակ ֆիզիկական պատիժն էր կատարում դպրոցում, նոյնը ալժժ աւելի մեղմացած կերպով թւանշանն է խաղում: Բայց անշուշտ ապագալում մանկավարժութիւնը այնքան կը նրբացնէ ուսուցման մեթոդը, գրաւիչ, հետաքրքիր կը դարձնէ դասերը այն աստիճանի, որ ուսանողը առանց թւանշանը ի նկատի առնելու հոգով սրտով կը զարգացնէ իւր մտաւոր ուժերը:

Անցնենք ալժժ դէպի սկզբնական դպրոցները: Պետերբուրգի կրթական կոմիտետը մի նիստում զբաղւեց այն հարցով, թէ՛ արդեօք կարելի է զիւղատնտեսական տեղեկութիւններ տարածել սկզբնական դպրոցներին միջոցով և հասաւ բացասական եղբակացութեան: Կոմիտետը գտնում է որ 7—9 տարեկան մանուկներին երկու-երեք տարալ միջոցում հազիւ կարելի է լինում գրել ու կարդալ սովորցնել, ուր մնաց որ նոքա կարողանալին ըմբռնել գիւղատնտեսական գաղափարներ: Միւս կողմից գիւղատնտեսութեան համար անհրաժեշտ աշխատութիւնները չափից դուրս ծանր կը լինեն վարժուիչների համար, որոնց մասնակցութիւնը սկզբնական դպրոցում անպալման ցանկալի է: Ինչ վերաբերում է վարժապետներին, սոքա էլ ազատ ժամանակը պիտի գործադրեն իրանց մտաւոր հորիզոնը լայնացնելու և խորացնելու վերալ, մինչդեռ վերուվիշեալ կերպով նոցա ծանրաբեռնելը կատարելապէս կը խլէ՛ նոցա ազատ ժամերը: Աւելի ցանկալի է, որ սկզբնական դպրոցը կարողանալ իւր միակ նպատակը բաւարար կերպով իրագործել, որ է գրել ու կարդալ սովորեցնել: Ի հարկէ՛ դպրոցին կից ալգի և պարտէզ ունենալը շատ ցանկալի է, բայց

նոցա մէջ աշխատելը պիտի վարժագետի կամ վարժունու համար պարտաւորիչ չը լինի:

Բանից դուրս է գալիս, որ Ռուսաստանումն էլ կան «հասարակական գործիչներ», որոնք սիրում են գործածել հասարակաց գումարները իրանց քէֆի համեմատ և ոչինչ հաշիւ չը հրատարակել: Ոմն Չեթով կտակել է հինգ միլիոն ռուբլի կոստրոմեան նահանգում մէկ միջնակարգ և շորս սկզբնական տեխնիկական դպրոցներ հիմնելու համար: Բայց ահա անցել է 14 տարի և կտակակատարները համարեա ոչինչ չեն արել կտակը գլուխ բերելու համար: Միայն ինչոր գործարանի հետ միացրել են մի գիւղատնտեսական ֆերմա: Այլտեղ էլ փոխանակ ահազին գումարից աղքատ և ընդունակ աշակերտներին նպաստելու, գիրեկտորը զիմում է զեմստովին խնդրելով տոխպենդիաներ հիմնել, որի պատասխանը լինում է աչն լանդիմանական խօսքը, թէ միլիոնատէրը օգնութիւն է խնդրում աղքատից: Ահա թէ որ աստիճանի անհոգութեամբ և անընդունակութեամբ են վերաբերում կտակակատարները դէպի հանգուցեալի միլիոնները, որոնց մասին ոչոք ոչոքի հաշիւ ներկալացինել չէ մտածում: Ասենք թէ կտակակատարները իրաւաբանօրէն պարտաւոր չեն հաշիւ հրատարակելու, բայց քիչ է ասում իրանց խղճի և պատւի զգացմունքը:

Չիժովի կտակի գործը շատ լաւ դաս կարող է լինել աչն հաւ հարուստների համար, որոնք իրանց կենդանի ժամանակ դրեթէ ոչինչ չեն անում և միայն մահը մօտեցած տեսնելով սկսում են կտակներ անել և զանազան վստահելի թէ անվստահելի կտակակատարներ նշանակել: Չգուշութիւն, պարտններ...

Ռուսաց հոգևորականութեան տնտեսական ապահովութեան հարցը վաղուց արդէն գրաւում է պետութեան ուշադրութիւնը: Թէ վարչական շրջանները և թէ մամուլը շատ են զբաղւել վիչեալ հարցով: Բանը նրանումն է, որ ծուխերը չեն կարողանում տնտեսական բաւարարութիւն տալ եկեղեցականներին: Իսկ վերջին ժամանակներս մանաւանդ աչն տեղերում, որտեղ ազանդները մուտք են գործել, հոգևորականների վիճակը շատ խախտող դրութիւն է ստացել: Մի ժամանակ փորձեցին պակասեցնել ծխերի թիւը, կամենալով աչգալիսով մնացեալ ծխերի դրութիւնը բարձրացնել, բայց փորձը չը չաջողեց, որովհետև ոչոք չը կամեցաւ իւր եկեղեցուց զրկւել: Ուրիշ անգամ հարց ծագեց, թէ արդեօք լաւ չէր լինի տակաւ նշանակել եկեղեցական պաշտօնավարութիւնների վերաջ, բայց ալը միտքն էլ անկարմար սեպւելով շուտով թողւեց: Մնում էր միայն, որ

սետութիւնը իւր վերայ վերցնէ հողերականութեան ապահովացնելը ուժիկ վճարելով սետական միջոցներից: Այդ գումարը տարէցտարի աւելացնում է: Սակայն ուսական 39,000 ժխերից առաջմ միայն 19,000-ն է օգտուում չիշեալ գումարից, իսկ մեծ մասը, զլիւսաւորապէս ներքին Նահանգների ժխերը անապահով վիճակի մէջ են: Պետութիւնը աշխատում է միջոցներ գտնել և սոցա ապահովելու համար: Այս տարի ևս ակնարկեալ միջոցների վերայ աւելացրած է 250 հազար բուրլի:

Վերջին ամիսներում Ռուսաստանը կրկին կորցրեց երկու բաւակա-  
նին աչքի ընկնող օդաւէտ գործիչներ:

Յունւարի 30-ին մուսա Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Սանտոն, որը չալտնի էր վիճակագրական ասպարէզում թէ տեսական և թէ գործնական աշխատութիւններով: Նորա աշխատասիրած «Վիճակագրութեան տեսութիւնը» նշանաւոր տեղ է բռնում գիտնական գրականութեան մէջ: Նա ունի մի շարք վիճակագրական հետազոտութիւններ վերաբերեալ հացի աւետրին և համանման կարևոր նիւթերին: Սանտոն էր Պետերբուրգի քաղաքային վիճակագրութեան թէ սկզբնապատճառը և թէ կառավարողը և այդ մասում շօշափելի օգուտներ բերեց մարաքա-  
ղաքի տնտեսութեանը: Թաղման ժամանակ կարդացւեցան մի շարք դամբանականներ, որոնցից մէկում գոկտոր Լիպսկի ալն միաքը չալտնեց, թէ հանդուցեալը ստեղծել է վիճակագիրների մի ամբողջ դասակարգ, որը ընթանում է նորա բացած շաւղով: «Այդ» ամսագրի խմբագիր Չեխով նկատեց, թէ հանգուցեալը վիճակագրութեան միջոցով չալտնի դարձրեց ալն անկիւնները, ուր տառապում էին շատ կուրեր առանց օգնութեան, իսկ եթէ ներկալումս կուրերին օգնելու գործը կանոնաւոր ընթացքի մէջ է դրւած, ալդ հանգուցեալի վիճակագրական աշխատութեան հետեանքն է:

Մարտի 9-ին ոմն Անդրիանով վերաւորեց բեւոյժերի երկու գնդակով Մոսկալի քաղաքագլուխ Ալէքսէյեւին, որը նոյն երեկոյեան մեռաւ: Սպանութեան պատճառը ճիշտ չէ որոշած, սակայն երկու հաւանական ենթադրութիւններ են անուամ: Չարագործը հաւանականօրէն հոգեկան տկարութիւն ունի, շատ ժամանակ չէ, որ նա արձակել է Նիկողայոս Հրաշագործի հիւանդանոցից: Բացի այդ, անցեալ տարի Անդրիանով ինչ որ ծրագիր է ներկալացրել քաղաքագլխին, որ վերաբերում էր ինֆլուէնցիալի բժշկութեան էլէքտրականութեան միջոցով, բայց ալն ծրագիրը չէ ընդունւած անմիտ համարելով: Գուցէ ալդ էլ շարագործութեան առիթ տւած ինիւ: Ալէքսէյեւը որպէս քաղաքագլուխ շատ օգուտներ է բերել Մոսկալին, ուստի և նորա մահը արևուր ազդեցութիւն արաւ ազդարնակ-

չութեան վերայ: Մոսկուայի դուման միաձայն որոշեց թաղման ծախսերը իւր վերայ վերցնել, դազադի վերայ արծաթեակ պրակ դնել, դումայի դահլիճում ունենալ հանգուցեալի պատկերը բնական մեծութեամբ և նորա վիշտակը լարգելու համար նշանակել քաղաքային գումարներից բարեգործական նպատակները համար 200,000 ռուբլի:

Կը բերինք քանի մի հետաքրքրական տեղեկութիւններ:

«Պետական համբաւաբերը» հազորդում է, որ 1892 թւին ուսաց ըրոր համալսարանների քննական ւանձնաժողովներում քննութեան ենթարկւեցան 1351 ուսանողներ, որոնցից ստացան առաջնակարգ դիպլոմ 480, երկրորդական—438, իսկ չը կարողացան քննութիւն բռնել 433 ուսանողներ:

«Սանկտ-Պետերբուրգի տեղեկութիւններ» լրագիրը լատնում է, թէ մինիստրների ժողովը հաստատել է բանտերի գլխատու վարչութեան առաջարկութիւնը՝ հիմնել առանձին տաժանական կոլոնիաներ Ասապից ծովի կղզիների վերայ Աուկասեան լանցաւորների համար:

Փակած է սովեալներին օգնելու համար թագաժառանգի նախագահութեամբ կազմած կոմիտետը և հրատարակած է սորա գործունէութեան հաշիւը, որից երևում է հետեեալը: 1891 թւի դեկտեմբերի 3-ից մինչև 1893 թւի փետրւարի 15-ը կոմիտետի գանձարանի մէջ մտել է անմիջական նւերներից 1,958,324 ռուբլի, ուրիշ հիմնարկութիւններից 2,480,307 ռուբլի և երկու բարեգործական խաղատոմսերի արդիւնքից 8,650,013 ռուբլի, գումարն է 13,088,644 ռուբլի: Միասուած է 12,279,179 ռուբլի, որից ձիեր են բաժանւած 1,678,976 ռուբլի գումարի:

Նոր լուս տեսած գրքերից փշինք:

Короленко, Владимиръ.—«Очерки и рассказы», книга вторая, т. 1 р. 50 к. Կորոլինկօյի այդ վէպիկները թէև ամենահասարակ նիւթերով են զբաղւում, բայց մեծ հետաքրքրութեամբ են կարդացւում շնորհիւ հեղինակի նուրբ դեղարւեստական ոճին:

Полонский, Я. П.—«Собаки», юмористическая поэма. Сб. 1892 г. Այս Պօլսկայի մէջ հերոսները զանազան ծագման շներ են, որոնք անբաւական լինելով իրանց կեանքով՝ կամենում են միարանութիւն կազմել ըրոր գազանների հետ և ընդհանուր ուժով բարւոքել կեանքը, բայց չէ լաջողւում մտադրութիւնը: Քէրևս հեղինակը կամենում է ասել, թէ այն ինչոր շներին և գազաններին չէ լաջողում, կարող է մարդկանց լաջողել, եթէ մարդիկ մարդիկ լինեն:

Голлесъ, Льюисъ.— „Бевъ—Хуръ“. Повѣсть изъ римской и восточной жизни въ эпоху возникновенія христіанства. полныи переводъ съ англійскаго, ц. 2 руб.

Սա մի պատմական վէպ է, որի մէջ որպէս ներսոներ մտնում են և Յիսուսը, Մարիամը, նորա նշանած Յովսէփը, Յովհաննէս մկրտիչը և այլն: Վէպի գլխաւոր ներսոր հրէալ Բէնիուրն է, որի ընտանիքը ուսմանական չարարերութիւններ է ունենում արեւելքից եկած երեք մողերից մէկի ընտանիքի հետ խկապէս ուշադրութեան արժանին ալն է, որ հեղինակը կարողացել է խիստ տաղանդաւոր կերպով արտապատել ալն ժամանակաւ կեանքը կրօնաազէմում, Բէթղէհնում և Անտիօքում:

Чупровъ, И.—„Исторія политической экономіи“. 1892 г. Գրքի մէջ ոչ միայն բացատրւած են տնտեսական խնդիրները, բայց և հեղինակը նկարագրում է զանազան ժամանակների տնտեսական կեանքի բնաւորութիւնները: Ընդհանրապէս գիրքը բաւական չարմար ձեռնարկ է քաղաքատնտեսութեան հետ ծանօթանալ կամեցողների համար:

Алексѣевъ, А. С.—Русское государственное право. Москва. 1892 г. Ալէքսէյեւի գիրքը ունենալով պարզ բացատրութիւն, գեղեցիկ լեզու և առատ նիւթ, կարող է համարել մի ընտիր ձեռնարկ ուսական պետական իրաւունքի հետ ծանօթանալ կամեցողի համար:

Таганцевъ,—Лекціи по русскому уголовному праву, часть общія, вып. IV и послѣдній. Сб. 1892 г. Յալանի պրոֆեսոր և սենատոր Տագանցեւի մեծ աշխատութիւնը, որի սպագրութիւնը սկսած է հինգ տարի առաջ, ալժմ պատրաստ է (ընդհանուր մասը): Գիրքը ոչ միայն նշանաւոր բովանդակութիւն, այլ և պարզ շարադրութիւն և թեթեւ բայց գեղեցիկ լեզու ունի:

Степанъ, П. А.—Страны креста и полумѣсяца и ихъ обитатели. Спб. 1893 թ., 500 էջից բաղկացած այդ համակրելի աշխատութիւնը ի միջի այլոց պարունակում է և թուրքիայի ասիական նահանգների մասին պատմական-աշխարհագրական և ազգագրական ճշգրիտ տեղեկութիւններ, թուրքիան ուսումնասիրողները կարող են ի նկատի ունենալ և այդ գիրքը:

Карно, И.—„Исторія французской революціи“. Переводъ съ французскаго подъ редакціей и съ предисловіемъ Р. И. Сементковскаго. Спб. 1893 г. քննա 1 руб. Գրքի մէջ համառոտ կերպով և հեշտ ոճով պատմւած է ֆրանսիական լեղափոխութեան պատմութիւնը: Չը նախելով իւր փոքր ծաւալին գիրքը տալիս է մեծ լեղափոխութեան դէպքերի փալլուն նկարագիրը, շատ լաւ բացատրելով նոցա նշանակութիւնը և երևութիւնները փոխադարձ չարարերութիւնները: